Լրացուցիչ համաձայնագիր թիվ 1

05.03.2021թ.-ին կնքված թիվ PD-181-03-21
Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհանդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք.Երևան «06»-ը մայիսի 2021թ.

«ՀԱՅՓՈՍՏ» Փակ բաժնետիրական ընկերությունը, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս Կոմերցիոն տնօրեն Ցոլակ Հովհաննեսյանի, մի կողմից, և «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը» (այսուհետ Հաճախորդ)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Ասլանյանի մյուս կողմից, կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 05.03.2021թ.-ին կնքված թիվ PD 181-03-21 Փոստային կապի, փոստային կապի հետ կապված սուրհամդակային կապի և օժանդակ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով «սահմանվում է» բառից հետո 36 628 560 (երեսունվեց միլիոն վեց հարյուր քսանութ հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել «122 095 200 (հարյուր քսաներկու միլիոն իննսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ» բառերով:

2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:

5.Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

«Հայփոստ» ՓԲԸ /
ք.Երևան, Սարյան 22/
ՀՎՀՀ: 02507464
«Կոնվերս բանկ» ՓԲԸ/
ՀՀ: 1930003703156000
Հեռ.՝ /010/ 514-548

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան/
ք.Երևան, Տ. Մեծի պող. 23/1 /
ՀՎՀՀ/ : 02583241
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն/
ՀՀ/ : 900011023851
Հեռ.՝/ : /010/ 54-79-16, /010/ 54-79-18

Կոմերցիոն տնօրեն՝ /
Ցոլակ Հովհաննեսյան/ _____

Աշխատակազմի ղեկավար՝ /
Արմեն Ասլանյան/ _____